ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 312-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացումը կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատանքային ծանրաբեռնվածությամբ, քանի որ Վայք համայնքում առկա են թվով 3 մանկապարտեզ և թվով 4 արտադպրոցական ուսումնական հաստատություններ, որոնց ամենօրյա աշխատանքները համակարգելու և համայնքապետարանի ու պետական գերատեսչությունների հետ կապը ապահովելու անհրաժեշտություն է առաջացել: Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում որոշ պաշտոններ համալրված չեն, ինչպես նաև համայնքային բյուջեի սեփական եկամուտների մասով արձանագրվել է աճ: Հիմք ընդունելով նաև ՏԻՄ օրենքով համայնքի ղեկավարին վերապահված կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում լիազորությունների պատշաճ և որակով կատարումը, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական ոլորտում պահանջվող աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը, Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, ինչպես նաև կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ նախատեսվել է համայնքապետարանի աշխատակազմում ավելացնել գլխավոր մասնագետի հաստիք:

Հարգանքով՝

Աշխատակազմի քարտուղար Ա.Ղազարյան